

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Կարո Սասունու գեկուցագրերը Տարոնի հայության վիճակի մասին*

Երբ 1916թ. փետրվարի 3-ին գեներալ Թովմաս Նազարբեկյանի գլխավորած Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիան և նրա կազմում գործող հայկական 2-րդ կամավորական խումբն ազատագրեցին Մուշը, այնտեղ գրեթե հայ չէր մնացել: Տեղեկանալով այդ մասին, լեռներում քարնված և հրաշրով փրկված հայերի փոքրաթիվ խմբերը, հիմնականում կանայք ու երեխաները, իջնում են Մուշ:

Կովկասի Հայոց բարեգործական ընկերությանը կից գործող Կենտրոնական կոմիտեն որպես Մուշի շրջանի լիազոր այստեղ է ուղարկում Կարո Սասունուն¹: 1916թ. մարտին վերջինիս գլխավորած խումբը, որը բաղկացած էր Արմենակ Սասունուց և Հմայակ Մանուկյանից², հգիրից ժամանում է Մուշ և սկսում է Եղենից փրկված բնակչությանը տեղավորել գյուղերում: 1916թ. հունիսին այստեղ է գալիս նաև Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի ներկայացուցիչ, մասնագիտությամբ գյուղատնտես Աշոտ Աքանասյանը, որն ուսումնասիրություններ է կատարում և ներկայացնում իր եզրակացությունները: Ա. Աքանասյանի հաշվարկների համաձայն՝ Մշո դաշտի 93 հայկական գյուղերից կանգուն էր մնացել միայն 17-ը: Մնացածները կամ հրդեհվել, կամ քարուքան էին արվել քրդերի ու բուրքերի կողմից: Ա. Աքանասյանը կատարել է նաև նյութական վճարությունների մոտավոր հաշվարկը, որը, նրա կարծիքով, կազմում էր մոտ 300 միլիոն ռուբի³:

1916 թ. մարտի վերջերին Ամենայն Հայոց կարողիկոս Գևորգ Ե-ի հրամանով կազմակերպվում է հանձնաժողով, որի անդամներն են Խսահակ սարկավագ Տեր Ղազարյանը, Գևորգյան ճեմարանի տեսչի օգնական Ա. Տեր-Պողոսյանը, ուսուցիչ Բ. Բահարբյանը և Էջմիածնի Եղբայրական օգնության բժիշկ Խ. Փանոսյանը (Սանֆանի): Նրանց հանձնարարվում է այցելել Տարոնի վանքերը, հավաքել իին ձեռագրերը և բժշկական ուսումնասիրություններ կատարել: Ըստ Խ. Փանոսյանի՝ Մշո շրջանի փրկված հայ բնակչության թիվը հասնում էր ինը հազարի⁴:

Տարոնի հայության բեկորներին օգնություն ցուցաբերելու նպատակով Հայկական կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Ալեքսանդր Շարաֆյանը Կ. Սասունուն է հանձնում երեք հազար ռուբի՝ քրդերի մոտ պահպող հայերին

* Յոդվածն ընդունվել է տպագրության 6. 06. 2010:

1 Կարո Սասունի (1888-1877)- ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, ՀՅԴ խորհրդարանի պատգամավոր (1919թ.): Կ. Սասունու մասին ավելի մանրամասն տես Ա. Ներսիսյան, Կարո Սասունի, Եր., 2004:

2 Տես «Աշխատանք», Եր., 28 սեպտեմբերի, 1916, N 43:

3 Ավելի մանրամասն տես Ռուբեն Սահակյան, Աշոտ Աքանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշնուրական գործում, «Բամբեր Հայաստանի արխիվների», N 1-2, 2007, էջ 47:

4 Տես «Վան-Տոսպ», Թիֆլիս, 12 յունիսի, 1916, N 29, էջ 7:

փրկագնելու համար⁵: 1916թ. հունիսի 12-ի գեկուցագրում Կ. Սասունին հայտնում էր. «Ապրիլի 20-ին մենք կազմեցինք մի ընդհանուր վիճակագրութիւն, որի հիման վրայ շարունակեցինք օգնութիւն հասցնել, բայց որովհետև ժողովրդի մի մասն անցաւ Խնուս և աւելի հեռուները, մի մասը տեղաւորուեց գիտերում և նոր եկողները շատացան, մենք հարկադրուեցինք կազմելու երկրորդ վիճակագրութիւնը մայիսի 20-ին, մի ամիս յետոյ առաջին վիճակագրութիւնից»:

Վիճակագրութեան արդինքը.

3071 շունչ Խութ, Բռնաշէն, Մօտկան

1596 շունչ Սասուն

4144 շունչ Մուշ, Մշոյ դաշտ և Կենած

Դասաւորուած են հետևեալ կերպով.

4506 շունչ Մշոյ քաղաքում

4205 շունչ Մշոյ դաշտում

Գումարը՝ 8711 շունչ»⁶:

1916թ. մարտի 29-ին Համառուսաստանյան Քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի գլխավոր կոմիտեում լսվում է Քաղաքների միության Խնուսի գործակալ Ստ. Զորյանի (Ո-ստոն) գեկուցումը: Նա հայտնում էր, որ Խնուսում և Մուշում օրեցօր ավելանում է քրդական գերությունից փախած և ողջ մնացած հայերի թիվը: Բացիկ են որբանոցներ: 15 օրվա ընթացքում եկածների թիվը հասել է 1500 հոգու⁷:

1916թ. ապրիլի սկզբին Կարո Սասունին Կենտրոնական կոմիտեին⁸ հաղորդում էր, որ Խնուսում գտնվում են երկու հազար փախստականներ: Սիածամանակ շարունակվում էր ողջ մնացած հայերի հոսքը Մուշի և Խնուսի շրջաններից: Ամենայն Հայոց կարողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Կ. Սասունուն տրվում է երկու հազար ոորին՝ գաղրականների համար ցորեն գնելու համար⁹: 1916թ. ապրիլից մինչև հուլիս Կ. Սասունին Տարոնի բնակչության համար գնել է երեք հազար ոորին ցորեն և գուգը: Դրա մեծ մասը Համա Մակարյանի, Սասունցի Մանուկի և Արմեն Սասունիի միջոցով բաժանվել է կարիքավորներին¹⁰: Սակայն պարենը խիստ անբավարար էր, և Կ. Սասունին հեռագով խնդրում էր Հայկական կենտրոնական կոմիտեին արագացնել օգնությունը, քանի որ «Փախստականների մեծ մասը ներկայումս ենթակայ է սովի»¹¹:

Մուշում և շրջակայրում գտնվող ոուսական գորամաները ևս հացի խիստ կարիք էին գգում: Գեներալ Թ. Նազարբեկովն իր հուշերում վկայում է, որ այդ հիմնահարցը լուծվեց Քաղաքների միության լիազոր Ստ. Զորյանի (Ո-ստոն) կողմից: Նա ոուս զինվորականների օգնությամբ արագործն կազմակերպում է

5 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1457, գ. 1, գ. 153, թ. 6:

6 ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 53-64:

7 Տե՛ս «Արեւ», Բագու, 28 օգոստոսի 1916, N 40:

8 Փախստականներին և կամավորներին օգնություն կազմակերպելու նպատակով, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական կենտրոնական կոմիտե բաղկացած 24 անդամից: Կոմիտեի անդամներն էին՝ Վրաստանի և Իներերի թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Սովոհսյանը (պատվասիր նախապահ), Սամոն Ջարությունյանը (նախագահ), Ալ. Խատիսյանը, Յովս. Խունոնցը, Ա. Մելիք-Ազարյանը և ուրիշներ: Ոուսական իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվել է 1915 թ. օգոստոսի 30-ին և ներկայացուցիչ ուներ Ներքին գործերի նախարարությունում՝ հանձին Պետական դումայի անդամ Մ. Անեմանի:

9 Տե՛ս «Հորիզոն», 9 յունիսի 1916, N 127:

10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, գ. 1, գ. 153, թ. 6 շրջ.:

11 «Համբաւարեր», Թիֆլիս, 24 յուլիսի 1916, N 30, էջ 941:

գյուղերում բարցված հացահատիկի որոնումը, ինչի համար ռուսները ստանում էին գտնված ցորենի կերպ¹²: Որոնողական աշխատանքների հետևանքով հայտնաբերվում են նաև 100 որբեր, որոնց նախատեսվում էր տեղափոխել Թիֆլիս¹³:

Սակայն 1916թ. հովհանի 23-ին ռազմաճակատում սկսված մասնակի նահանջը հարկադրում է կիսաս թողնել գործերը և կազմակերպել Մուշի և դաշտի բնակչության տարհանումը անվտանգ վայրեր: Հայաստանի կենտրոնական կոմիտեին ուղարձ հեռագրում Կ. Սասունին հայտնում էր. «Դեպի Բաշքեօյ ճանապարհությին 10000-ից աւելի զարդարական և 400 որք. խնդրում ենք կարգադրեցներ նրանց դիմաւորելու և օգնություն ցույց տալու»¹⁴: Վտանգը վերանալուց հետո, 1916թ. սեպտեմբերի 23-ին Կ. Սասունին կրկին վերադառնում է Մուշ¹⁵:

Գեներալ Ֆ. Նազարբեկովի վկայությամբ, ռուսական գործերը մի քանի անգամ պատժի արշավախմբեր են կազմակերպում քրդական անկանոն ջոկատների դեմ: Քրդական գյուղերում նրանք հիմնականում գտնում էին հայ ծերունիների, հիվանդների, կանանց ու երեխաների¹⁶: Որոշ օգնություն են ցույց տալիս նաև բալակցի, մոտկանցի և հատկապես՝ Շեկոյի տան քրդերը, որոնց միջոցով հաջողվում է փրկել զավի թվով հայերի: Սակայն նման դեպքերը բավականին քիչ են, քանզի քրդերի ճնշող մեծամասնությունը մասնակցել էր Հայոց ցեղասպանության իրականացմանը:

Կարո Սասունու ստորև ներկայացվող մանրակրկիտ ու փաստարկված գեկուցագրերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում: Փաստաթուր տպագրվում են առաջին անգամ՝ ուղղագրական ու կետադրական որոշ շտկումներով և ոճի պահպանմամբ: Մեր միջամտությունները իրականացվել են ուղղաձիգ փակագծերով: Բոլոր ընդգծումները փաստարդինն են, իսկ փաստաթուրների վերնագրումը՝ հեղինակինը:

Ուրիշն Սահակյան
պատմ. գիլ. թիկնածու

THE PROBLEM OF RECONSTRUCTION OF WESTERN ARMENIA IN 1915-1917

The Reports of Karo Sasuni about the State of the Armenians of Taron

Ruben O. Sahakyan

12 Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 19:

13 Տես «Գաղափար», Թիֆլիս, 27 մայիս 1916, N 41:

14 «Դամբաւաբեր», 7 օգոստոսի 1916, N 32, էջ 1005:

15 Տես նոյն տեղում, 1 մայիս 1916, N 18, էջ 555:

16 Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 17 շրջ.:

N 1.
**Հայոց Կենդլրոնական Կօմիտեի
 Վարչութեան**

(Չեկովում Մշոյ շրջանի գործունեութեան
 մասին)

10 սեպտեմբերի 1916թ.

Թիֆլիս

1916 յունի 10-ին պ. Միքայէլ Տէլք] Գէորգիանի և Համօ Մակարեանցի միջոցաւ տուել եմ իմ մարտի 1-ից մինչև յունի 10-ի հաշիները և թէ գործունեութեան մասին մանրամասն գեկուցազիր: Հին գեկուցազիրի վրայ աւելացնում եմ մի քանի տեղեկութիւններ որպես լրապահութիւն:

ա) Մարտի սկզբներին Թիֆլիսում գտնուած մշեցի երիտասարդներ, բայց 130 հոգի դիմեցին ընկերութեան մեկնելու Երկիր: Նրանց սրամադրութեան տակ դրւեցավ 5000 [ռուբի] որպէս ճանապարհածախս և շրեղէնի ծախս: Այդ ուղղութեամբ դէպի Մուշ մեկնեցին մօտ 300-է աւելի երիտասարդներ, որոնք խմբաւորութեամբ մնացին Մուշում և դաշտում: Այդ խմբերի գաղքականական բոլոր մարմններին ցուցադրութիւն են մեծ աջակցութիւն և համարեան թէ առանց նրանց աջակցութեան հնարաւոր չէր մի լուրջ ձեռնարկ իրականացնել: Այդ խմբերի հետախուզութեանց շնորհի, զինուրական իշխանութիւնը միշտ բարյացակամ էր վերաբերում դէպի հասարակութիւնը:

Գաղքականական գործում խմբերը կատարում էին բոլուցիկ խմբերի պարտականութիւն: Հասարաւում էին զարդարականները քրոպական շրջաններից, նոր ազատուողներին պաշար էին տայիս և առաջնորդում էին դէպի Մուշ, իսկ շատ տեղերում, 100 հոգիով, միշտ դեկատուրութեամբ հայտնի Սամուկին, երկար կորսներից հետո ազատուած են մեծ քովով գաղքականները:

Ապրիլի սկզբներից մինչև ապրիլի 15-ը Սամուկն ունեցել է երկու արշավանք դեպի Խոյք-Բռնաշէն շրջանը.

| | |
|------------------------------------|------------|
| 1[-ինը] Արշաւանքն ազատուած են 1700 | շունչ |
| 2[-րոյ] -,- | 800 -,- |
| Ընդամենը | 2500 շունչ |

| | |
|---|-------------|
| Նոյն խմբապետի դեկատուրութեամբ կատարուած են 3 արշավանքներ ևս | |
| 1[-ինը] դէպի Ծովասար և բերած է | 300 շունչ] |
| 2[-րոյ] դէպի Տալրորիկ -,- | 170 -,- |
| 3[-րոյ] -,- դարձեալ -,- | 300 -,- |
| | 700 [շունչ] |

Ընդամենը Սամուկի միջոցաւ բերած են 3270 շունչ

Բացի այդ աշխատանքներից, մշտապէս գտնելով դիրքերում, անէն մէկ փախստականի, մասնաւոր զինուրների միջոցաւ, դիրութիւն է տրած հասնելու Մուշ և չենթարկուելու կայանն կայան տարւելու դժբախտութեան:

Նկատի ունենալով վերը յիշուած գործունեութիւնը, հեռագրել էի վարչութեանդ, որպէս զի նոր բոլուցիկ խմբեր չորկին, քանի որ տեղում այդ պարտականութիւնը կատարում են:

Խմբերը ամբողջ ժամանակամիջոցում որ և է նիրական օգնութիւն մեզմէ կամ այլ մարմիններից չեն ստացել, բացի բարյական աջակցութիւնից, այն է յարաբերութիւն պահել զինուրական իշխանութեան հետ դօգումնենուներ [փախատարդեր] և դիրութիւններ տալ, իսկ խումբը ապրում է իր անդամների ձեռք բերած հացահատիկներով և աւարմերով: Մշոյ շրջանի մեր կոմիտէի անդամները ոչ մի ժամանակ առնչութիւն չեն ունեցել այդ խմբերի ներքին նիրական դրութեան հետ: Իրաքանչիր խումբը ուներ իր անտակարար մարմննը և տանում է գործը անկախ, մենք միայն հսկում ենք, որպէս զի սանձարձակութիւններ տեղի չունենան: Նոյն խմբերից աւարներ են ունեցել.

1. Արշակ Բօլենանի խումբը՝ 60 եզ և կով, 300 ոչխար

2. Մանուկի խումբը՝ 80 -,-,-:

Առաջի խմբի աւարներով, նոյն խմբի համար առած են 7-8 ձիեր, գործածել են որպէս մասցու: Մնացած մեծ մասը փողի վերածելով բռնել է 2810 [ռուբի]: Այդ փողը նոյն խմբի դեկավարների փոխադարձ համաձայնութեամբ ծախսած է սպանածների ընտանիքներին, խմբի անհրաժեշտ կարիքնին և յետոյ գործօն դեր կատարութիւնները մոտ 1000 [ռուբի] բաժանել են իրենց մեջ 30 հոգի: Այդ մատակարարական գործից նոյն խմբը անդամներից շատերը դժգոհ լինելով, թէ ինձի և թէ այլ գործիներին նոյն առիթի բողոքներ են ներկայացրել: Բայց մենք միջամուխ չենք եղած լսելու այդ բողոքները՝ մեր իրավասութեան սահմաններից դուրս նկատելով:

Երկրորդ խմբի աւարների կէսը տրած է 6-րդ սպառեկազմը բօյզին [իրածգային գնդին], նրա մասնակցութեամբ եղել է այդ աւարը, իսկ մնացածը Մանուկի խմբի մատակարարման մարմնի միջոցաւ ծախսել է նոյն խմբի կարիքների վրայ և շատ կանոնաւոր:

բ) Ուզում են շեշտել նաև այն աշխա-

տանըների մասին, որ կատարած են նոյն խմբերը ցորեն և զրլգը հայրայքելու գործում։ Փողային միջոցներով շատ քիչ քանակութեամբ ենք ստացել նրանցից պարեն, բայց կառավարութեան բոլլտուրթեամբ կազմակերպել ենք ժողովրդական կարաւան զանազան շրջաններից պաշար փոխադրելու, իրաքանչիրի բերածը իրեն պատկանելու պայմանա։

Նկատի ունենալով մի քանի շրջանների վտանգավոր լինելը, այդ ժողովրդական կարաւաններին ընկերացել են այդ խմբերից 20-ով, 30-ով։ Երկու անգամ էլ զինուրական իշխանութիւնն էլ է մասնակցել և ժողովրդի բերածի կեսը ստացել է ինտենզանուստվոն իհամքարակային ծառայությունը], համաձայն ենք եղել այդ բաժանումին, որովհետև զինուրական այդ հաստատութիւնները մեզ աելի դիրքութիւններ էին տալիս։ Ժողովրդական կարավանները օգտել են հետևեալ քանակութեամբ։

1. Խմբապետ Մարտիրոսի ղեկավարութեամբ Զխորի շրջանից ժողովուրդ բերել են 2500 կոտ ցորեն, որմէ ինտենզանուստվոյին տրած է 900 կոտ ցորեն։

2. -,- Մարտիրոսի ղեկավարութեամբ Զխորի շրջանից ժողովուրդ բերել է 2500 կոտ զրլգը։

3. -,- Մանուկի ղեկավարութեամբ Քօսուրից 10-ը օրս ընթացքին -,- 2400 -,- ցորեն։

4. Մանուկի ղեկավարութեամբ Ս. Կարապետի շրջանից -,- 800 -,- զրլգը։

Հնդիանոր գումար

7200 փուր

Ներկայ 7200 փուր պարենը ժողովուրդը ստացել է ձրի՝ մեր ներկայացուցի և այդ խմբապետերի միջոցա։ Եւ այդ բանը հայուն է Մշոյ և դաշտի ամբողջ հասարակութեան։ Այդ աշխատանքների մասին տեղիս կօմիտն շնորհակալութիւն է յայտնել նոյն խմբերին։

Իմ զեկուցման ընթացքին մի քիչ ծանրացայ այդ խմբերի վիա։ որպէս զի որոշ լինի մեր և այդ անկախ մարդիների գործունեութիւնը և իրարու հետ չշփորին Մշոյ բայօնում (շրջանում) կատարած գործերը։

1916թ. յունիս 10-ից յետոյ մինչև նահանջի օրը Մշոյ շրջանում ունեցել ենք երկու բաժանաւած աշխատանքներ։

1. Յունիս 10[-ից մինչև] նահանջը-յուլիս 23

ա) Օգնութեան գործը։ Մենք կարօտեալ-ներին այդ ժամանակաշրջանին տուլ ենք մեր փողային միջոցներով 350 փուր ցորեն և 1300 -,- զրլգը։

Այս հաշի մէջ չի մտնում ձրի բաժանաւած պարենները։ Յորենի պարենը վերջացած լինելով մենք կարօտեալներին տուլ ենք միայն գրլգը և այն էլ միայն 15 օրույ պաշար։ Այդ օրերում ազատուում էին օրական 40-60 շունչ Սասունի, Դիարբեքիրի, Հազօյի և Մօտրկանի ուղղութիւնից և բռուցիկ խմբերի առաջնորդութեամբ բերուում էին Մոլ։ Վերջերս նոր ազատաւածներին տեղափորում էինք Մշոյ դաշտում, որ հաստնացած հասկերը հաւաքելով ճարում էին իրենց ապրուստը։

բ) Մինչև յունիսի վերջերը տեղում կազմաւած խմբերը աշխատուում էին ձրի և միայն պէտք եղած ժամանակ գտնուում էին իմ տրամադրութեան տակ։ Բայց երբ Համօ Մակարեանցը և Ս. Տեր-Գէորգիանը մեկնեցին Կովկաս, յետոյ իմ աշխատողներից Աւետիս Թավաքալեանցը մեկնեց որբերի հետ՝ գործերի բարդութեան պատճառաւ, նկատի ունենալով և՛ դաշտային աշխատանքների կազմակերպումը, ստիպեցի տեղական լաւ ուժերից իինզը իրափել աշխատանակեայ պաշտոննեայ ինձի աջակցելու ընդիհանուր գործում։ Մինչև յուլիս 21-ը այդ իրափեանցները կատարեցին իրենց պարտականութիւնը շատ լաւ։ Նկատի ունենալով, որ դրանք աշխատուում էին ունենալով իրենց սեփական ձիերը, բացի մէկից, որ ես զնել եմ (75) բուրյուու, որոշել և տու իմ այդ գործիներին (90)-ական բուրյի, մի ամսավճար, որպէս ժողովրդին մինչև Կովկաս առաջնորդողների։

գ. Դաշտային աշխատանքները։

Իմ առաջին գելուցման մէջ ներկայացրել էի մէկ քանի պայմաններ, որոնք անհրաժեշտ էին պարենատելու շրջանը։ Ինձի հեռագոտեց, որ իմ առաջարկմերն ընդունած են, իմ ներկայացուած սմէտայով [նախահաշվով], ամիսը 1500 թթութի։ Յովիսի սկիզբից ինձ հետ վերցնելով մեր բռուցիկ խմբի 5 անդամներից 2-ը, ծշտապէս պարապեցինք որոշ երկրագործական կազմակերպութիւն ստեղծելու դաշտում և այդ մեզի լաւ յաջողութեց։ Ամէն մի գիտ ունի իր գիտական մարմինը, որու պարտականութիւնն է դասաւորել աշխատանքները, բաժանել բերքը ըստ շունչի, պահեստներ ստեղծել սերմացուի, գիտական վեճեր կարգադրել և մեր հասցուցած օգնութիւնը բաժանել հասարակութեան։

Այդ կազմակերպչական ծեսի շնորհին մեզի յայտնի եղաւ, թէ որքան պարեն պիտի բոլմել դաշտի հասարակութեան և որքան պիտի վերցնել փողով նրանցից, օգնութիւնը

հասցենու բոլորովին չունեցողներին: Այդ ուղղութեամբ հազի աշխատանքները սկսել էն առաջ գնալ, հաւաքում էինք աւելցած ցորենները, տեև էինք գիլտայիններին 24 եգներ, որպէս զի կարողանան կամնել իրենց կալերը, տեղի ունեցաւ յանկարծակիօրէն 23-ի գիշերայ ճահանջը, որը մեզի ստիպեց քաղաքը պարպել գիշերանց, 1 ժամանակ ընթացքում և դաշտը յաջորդ օրը մինչև կես օրեն:

11. Յուլիս 23-ի նահանջը մինչև Կովկաս:

Սաստինի խուզարկու խմբերը կառավարութեան օգնելու համար 10 օրէ ի վեր գտնուում էին Սաստոյ լեռնաշղթայի վրայ: Խոմքը բաղկացած էր 300 գիճանած մարդկանցից: Յուլիս 20-ից սկսեալ մեր խուզարկու խմբերն անմիջական շփման մէջ էին գտնուում թրքական կանոնաւոր օրքերի հետ: Զինուրական իշխանութեան կողմից օգնութեան հասնելով մերոնց, երկու օր անընդհատ կուտում էին թշնամիի դէմ: Յուլիս 22-ին տաճկական գերազանց ուժերը գրաւեցին Մշո դաշտի Ղրզըլաղած գիւղը, որով գրաւեց մերոնց կրնակը և սպանուում էր կտրել Մշո ճանապարհը: 23-ի առաջութեան պատուեներ և հրահանգներ տրեց, թէ Մշոյ և թէ դաշտի բնակչութեան իր իիերով պատրաստ լինել, Վանազի բոպէին մեկնելու: Գլխաւորաբար ուշադրութիւն դարձնելով պաշար վերցնելու վրայ:

Յուլիս 23-ի գիշերը սաստինի խմբերը ստիպեցին լեռներ վար հջնել ժամը 10-ին: ԱԵԿ ժամանակ ընթացքին դասաւորեցին զինած մարդիկը նահանջին գիծը պաշտպանելու համար և ժողովուրդը թուվ 5000 շունչ դրու եկան քաղաքից մինչև գիշերայ ժամը 12-ը: Աերորդանոցը և գոյքերը գտնում էին Մոկունք գիտը, 4 վերաս հեռու Մուշից: Քաղաքի բնակչութերը պարպելէ յետոյ, ուրը ձիաւորենով մեկնեցի Մոկունք և մինչև առաօտեան ժամը 3-ը հազի մեզի յաջողուց որքանոցը, արօգը [գումակը] և ուրիշ գոյքեր դրու քերել Մոկունքն մինչև Սովորիսի կամուրջը: Մոկունքն առաօտեան ժամը 9-ին 2 ձիաւորեներ որկեցի դաշտ՝ շրջաբերականով, որպէսզի անմիջապէս մեկնեն Զարքահար պաշտպանելով զինած

nɪðþrnu:

Յովիլիս] 24-ին, իմ 8 ծիատրոներով վերապարձայ Մոլց քաղաքը, տաճիկներով դեռ չէին մտած քաղաք: [Յովիլիս] 24-ի երեկոյեան կողմը ժամը 7-ին դարձեալ 2 սուրիանակ դրկեցի դէափ վերջին մնացողոթերին փութացնելու: [Յովիլիս] 25-ի գիշերը տաճկական ռազմիտևկան [հետախուզությունը] մտաւ Աշոյ քաղաքի մի մասը և մենք ստիպւեցինք բռնել քաղաքը լույս 25-ի գիշերը ժամը 12-ին: Մեր սուրիանակները 3 ժամ յետոյ դաշտից վերադառնում են մեզի լոր տալու, որ դաշտը բնակիչներից պարպած է, և ասս բռնում են տաճկական օքրի գնդակների: Մեր սուրիանակները փախչում և ազատում են, որոնք մեզի եկան հասան Չարքահար: Մենք ժողովուրիդ յետնապահներին հասանք Ծխառու գիտի և Չարքահարի մէջ, Մոլչից 35 վերատ դէափ Խնուս: Յովիլս 26-ին հասնում ենք Խնուսի Արու գիլը, որ գտնում է մեր սննդատու կայանը և այդ տեղից ամփոփելով մեր ուժերը՝ սկսում ենք 10000 զարքականական հոսանքին հասցնել օգնություն:

Նահանջը մեզի ստիպեց Մուշում և դաշտում թղթել մօտ 250 կօս ցորէն և 300 կօս գլուզը: Սովորված կամուրջում 26-ի առաւտ դէքը տէղի ունենալով Յուշտամ գիլացիների և տաճկական զորքի միջև, տղամարդիկ փախչում են, նոյն տեղ սպանում են կանայք և երեխաներ՝ մօտ 22 շունչ: 15 հոգի Խորի շրջանից մնացին դաշտում, որոնց ի՞նչ վիճակուեց՝ չգիտենք, այդ մնացողները ետ ինչկան, հակառակ մեր մի քանի անգամ ստիպելու:

III. Նահանջի գիծերը:

Խնուում մի խորհրդակցական ժողովից
յետոյ, որ կայսցա այդ վայրում գործող բռնը
գաղրականական մարմինների ներկայացու-
ցիչների մասնակցութեամբ, որուից երկու
զօնվ ճանապարհ զգել հսարակութեան, օգ-
նութիւնը դիւրացնելու հաճար:

ա) Գիծը շահի [առօսեանական, խճուղային] ճանապարհը մինչև Քասէնի Ղարաբիլսէ, որիկ անցան 3500 շունչ և երանց դիմաուրեցին Սոյուզ Գարատովի¹⁷ պանկտերը [Քաղաքաների

17 «Союз городов» - «Республиканский союз городов» (образован в 1915 г.)

N 2

Քիսմէտ

Հայոց Կեղրոնական Կօմիտէի վարչութեան

միուրյան սննդակայանները], բառ 3: բ) Խնուրից լեռնային ճանապարհով մինչև Բասէնի Ղարաքիլիսէ: Այդ ճանապարհի առաջնորդութիւնը վերցրինք ես և իմ աշխատակիցները: Այդ ճանապարհով անցան 6500 շունչ:

IV. Մեր սննդատու կայանները:

Մենք ստիպեցինք բացի Արօսից, բաց անել Չառուրմայում, Դօստաւերանում և Քօչանայում կայաններ, որ բաժանել ենք, ըստ ցուցակների, այդ 4 կայաններում 10018 շունչ 856 փոր ալիր և 26 փոր շաբար: Մասց ենք տուել հասարակութեան 9 եզ, 7 կով, 4 ոչխար, 4 այծ, 3 ով:

Պարենաւորման սրլազը [պահեստը] այդ օրին ստացան 670 փորից ալիր, որ դրկեցինք սննդատու կայաններին անմիջապէս բաժնելու: Իսկ մնացածը տեղում, նոյն գիտերում գնելով գործածեցինք:

Ղարաքիլսէ հասնել յետոյ մեր աստիափի [ջոկատի] անդամներէն շատերը դրկեցի Բասէնի Արմատիլ, ատկէ մինչև Կաղզան՝ Կենդրոնական՝ կոմիտէի հինգ կայաններում աշխատելու համար: Որբերը՝ բառ 350, մինչև Բաշքէյ լեռնային ճանապարհով բերել յետոյ, 150-ը յանձնեցինք իրենց մայրերին, որոնք խնդրում էին, իսկ մնացած 200-ը դրկեցինք Կաղզան, որը [որտեղից] փոխադրուեց Կարսի վրայով Ալեքսանդրապօյ:

Մեր աշխատակիցները ժողովրդի եւս և առաջ ինկած մինչև Ալեքսանդրապօյի դաշտավայրը բերին ժողովրդին և տեղաւորելէ յետոյ վերադարձան Սարդարապատ, որը աստիազը լիկվիդացիայի [լուծարման] ենթարկուեց: Ապօքը և ծառայողները մնում են Սարդարապատ՝ մեր գոյրերով, որի ցուցակը կցում եմ իմ գեկուցագիրն զեկուցագիրը բացակայում է:

Խնուրում յարմար նկատեցի քողնելու Սխիքար Դարձանեանին մի աշխատակիցով, որոնք պիտի պահպանէին մեր գոյրերը և տանէին անհրաժեշտ աշխատանքները:

Քժշկական-սանհիտարական գործունեութեան մասին իմ ընդիհանուրը] զեկուցումին կցում եմ թթիշկ Սանուկենանցի այդ առքին եղած գեկուցումը¹⁸:

Զեկուցումս վերջացնելուց առաջ ուզում եմ ինձի փոխադրուած գումարների մասին տեղեկութեան և հաշի ներկայացնել նոր առաջարկներ, նոր սմենտայով, առանձին նամակով, որը կցում եմ գեկուցագիրն:

18 Զեկուցագիրը տես՝ ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 76-77:

Ստանձնած լինելով Մշոյ շրջանի գաղթական գործերը վարելու լիազորութիւնը, 1916թ. փետրվարի 20-են սկսեալ Կօմիտէն ինձի փոխադրուած է պարբերաբար մինչև յունիսի 12025 թ[ուրիի]:

Առաջին ամսեայ հաշիներս և դօգումէնտները ընդարձակ զեկուցումով դրկել են Միքայէլ Տ[եր] Գէորգեանի և Համօ Մակարեանի միջոցաւ վարչութեանը, ներկայացնելով 10532 թ[ուրիի] 96 կ[ոպէկ] ելք: Որով առաջին հաշի նեկայի փակումն յետոյ իմ քովս՝ Մուշում կը մնայ 1492 թ[ուրիի] 04 կ[ոպէկ]:

Երկրորդ եռամսեակին Մուշում ստացել են Կօմիտէի պարբերաբար (որոնց մանրամասնորինը հաշիեկշիմի մէջ բականներով նշանակած է) 5300 թ[ուրիի]:

Օգոստոսի 24-ին Շարաֆեանից՝ 3000 թ[ուրիի] աստիազները [ջոկատները] լիկվիդացիայի ենթարկելու համար: Որով երկրորդ եռամսեայի մոտք լինում է 9792 թ[ուրիի] 04 կ[ոպէկ]:

Սեպտեմբերի 8-ին տալով պ. Շարաֆեանից 3000 թ[ուրիլ]-ու հաշիը, որով փակած է համարում, մնում է իմձ մօս 300 թ[ուրիի]: Ընդիմանուր] գումարը՝ 7092 թ[ուրիի] 04 կ[ոպէկ]:

Հաշինեկշիմն կցում եմ երկրորդ եռամսեայ հաշիների փաստարդերը, որոնց գումարն է՝ 7369 թ[ուրիի] 14 կ[ոպէկ], որով կօմիտէն պարտ է (277 թ[ուրիի] 13 կ[ոպէկ]) երկու հարիւր եօրանասուն և եօրըն:

Ներկայ հաշի մէջ մնուած 1916թ. սեպտեմբերի 4-ին Սարդարապատում կենդրոնացած ապօքի [գումակի] ծախքերի համար ապօքի պատասխանատու պ. Աւետիսի Թաւարալեան աւանս տրաւած 150 թ[ուրիի] Մշոյ երեք գործիներին յատկացւած զգեստի փող 300 թ[ուրիի], որու մասին խնդրում է մասնաւոր որոշում, որովհետև այդ ծախքը եղել է առանց Կօմիտէի կարգադրութեան: Բաց մնացած այդ գումարները 277 թ[ուրիի]: Ըստ հաշինեկշիմ 150 թ[ուրիի] աւանս և 300 թ[ուրիի] աստիազն բացառիկ ծախք, որով խնդրում է Կօմիտէի գօղել 727 թ[ուրիի] 13 կ[ոպէկ] բացը և ընդունել իմ ներկայացրած հաշիները իրենց փաստադրերով: Այդպիսով գօղած կը լինեմ իմ հաշի-

ներս Կօմիտէի հետ: Աւելացնում եմ, որ չորս ամիս է, ինչ չեմ ստացել ամսավճարներս, խնդրում եմ նաև վերի գումարի հետ տալ նաև չորս ամսավճարներս:

Առաջարկներ: Նկատի ունենալով, որ Հայկ[ական] Կեդրոնական] Կօմիտէն չի կարող ամբողջովին Խնուսի-Մուշի շրջանից լիկվիդացիայի ենթարկել իր գործերը հետևեալ պատճառներով.

ա)-որ Խնուսի և Մշոյ շրջանում կան 5000 շունչ զարթականներ:

բ)-որ Մշոյ և Սասունի շրջանից կը գան ամեն օր պարբերաբար 30-60 շունչ և կեղրոն-նանում են Մուշում:

գ)-որ Մոտքանի, Հազօյի, Ֆարղինի և Տիարպէրիի շրջանից սպասում է ոչ պակաս քան 9000-10000 զարթական:

դ)-որ անհրաժեշտ են քուոցիկ խմբեր՝ ընդունելու նոր եկած որդերին՝ հաւաքելու և զարթականներին օգնութիւն հասցնելու:

ե)-որ անհրաժեշտ է ալիքի պահեստ ունենալու Խնուսում:

Առաջարկում եմ.- ա) Ունենալ Խնուս-Մշոյ շրջանի համար 8 հոգիանոց մի խումբ՝ 3-ը մշտապէս Խնուսի համար, իսկ 5-ը՝ Մշոյ և առաջին գծերի համար: Այդպիսի փերսոնալի համար հարկաւոր է 1000 ր[ուբիխ] բիտճէ: բ) Քօսուրի և այլ լեռնամասերից քրդերի փախչելու պատճառաւ հնարաւոր է այդ լեռնամասերից շատ դիրութեամբ հաւաքել մինչև 6000 փութ ցորեն: Իսկ եք: Սասունի լեռնաշղթան անցնի գորքը՝ կարելի է շատ քանակութեամբ ցորեն գտնել: Ուստի տուովովկիները [Երկանիվ սայլերը] վերակազմել և 10 հատը գործածել այդ գծի վրայ՝ ցորենի հաւաքման, որը երի փոխադրութեան և [այլ] աշխատանքների համար, ինչ որ պարէնաւրման տրամափօրքը չի կարող պարպել: Տրամափօրքի և ծառայողների համար ամիսը կը նախատեսի 1200 ր[ուբիխ], որով Մշոյ և Խնուսի ասրեանը ունենալով իր փոքր տեղական ապօռք Կօմիտէի վրայ կը նատի:

| | |
|-------------|---------------|
| Փերսոնալը | 1000 ր[ուբիխ] |
| Տրամափօրքը | 1200 ր[ուբիխ] |
| [Ընդհամենը] | 2200 ր[ուբիխ] |

Ցորենի պաշար հաւաքելու համար 5000 փութ հարկաւոր է (միջին հաշուով 4 ր[ուբիխ] հաշուով փութը) 20000 ր[ուբիխ]:

Առաջարկելով վերը յիշած պայմանները, խնդրում եմ անել շուտափոյթ կարգադրութիւն-

ներ վերսկսելու Խնուսի-Մուշի շրջանում նոր գործունեութիւններ:

Յարգանքներով՝ Խնուս-Մուշի շրջանի Հայկ[ական] Կեդրոնական] Կօմիտէի Լիա-գոր՝ Կարո Սասունի [ստորագրություն]

ՀԱՍ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 65-75:

Բնագիր: Զեռագիր:

N 3

**Զեկուցում Խնուս-Մուշի շրջանի մասին
Հայկ[ական] Կեդրոնական] Կօմիտէի
վարչութեան**

1 դեկտեմբերի 1916թ.
Թիֆլիս

Վերակազմած լինելով Խնուս-Մուշ շրջանում աշխատող Հայկ[ական] Կեդրոնական] Կօմիտէի ատրիադները [ջոկատները], սեպ-տ[ենքերի] 26-ին մեկնեցին Խնուս-Մուշ հետևեալ պարտականութիւններով.

ա) Պարենաւորման մի ճիշտ ստեղծել Խնուսում և պաշար հասցնել հասարակութեան:

բ) Մուշի և ուրիշ գծերից նոր ազատ-տողներին հասցնել անմիջական սնունդ, տեղափոխել և խնամել որբերին:

գ) Հաւաքել սերմացու ապագայի համար: Հասմենով Խնուս՝ ծանօթացայ իրերի դրութեան հետ (որոնք այս անզամ աելի լուր կերպարն էին ստացել քան երբ և ից):

Այդ սուր կարիքները հետևեաներն են:

ա) Պետուական նպաստ ստանալու խնդիր, որ մինչև իման 8 ամիս է կը ձգձգուի:

բ) Հացի սովոր և մեր պահեստներին ալիրից ու պաշարից զուրկ լինելը:

գ) Գամբանացանի պարտաստորիւն, որ պիտի լինի Կովկասից:

դ) Սի որբանոց հիմնելու անհրաժեշտութիւն, քանի որ հնարաւոր չէ ձմեռ ատեն երեխաներին տեղափոխել, երբ Խնուսից Սարիղամիշը չկան յարմար բունգտեր [սննդակայաններ]:

Խնուսի շրջանի վերոյիշեալ կարիքները ուսումնավիրել յետոյ՝ անցայ Մուշ՝ անձամբ ծանօթանալու նոր ազատողների դրութեան հետ: Անհրաժեշտ նկատեց:

ա) Բաց անել մի բունգտ և հեռագրել վարչութեան ի հաւանութիւն:

բ) Աւելացնել Մուշի աշխատողների թիւը՝ աւելի լաւ հասնելու նոր ազատութերին:

Վերը յիշած բոլոր խնդիրները ինձի ասից անմիջապէս անցնել Կովկաս և դրանց

լուծումը առաջարկել վարչութեանդ:

Աղիքից օգտելով կը տամ համասոս տեղեկութիւն մեր այնտեղի գործունեութեան մասին և կը ներկայացնիմ իմ առաջարկները:

Իմ տրամադրութեան տակ աշխատողները բաժանել եմ երկու խմբի.

ա) Խնուսի

բ) Սուլշի

Այդ երկու խմբերը բաժանելով աշխատանքը իրաքանչիրը իր շրջանում տանում են գործերը շատ գորհացուցիչ:

I. Պահեստի գործունեութիւնը.- Մինչև իհման դեռ մեզ չը յաջողուեց ալիրի և շաբարի պաշար ունենալ Խնուսում: Նոյն տեսակի պաշար գնելու համար ժողովուրդը բաւական դժուարութիւն է կրում, որովհետև չստանալով պետական նպաստ, չունի և փոխ:

Անկ քանի գիտերից մեզի ներկայացնեցան ժողովրդի կողմից խնդրանք, որով յայտնում էին, թէ իրենք ստվաման են լինում և խնդրում էին ունե օգնութիւն:

Կոմիտէիս նախկին գործունեութեան ժողովրդի կողմից խնդրանք, որով յայտնում էին իրենք ստվաման գնելով պահեստի հաշին կարգադրուեց ամենաշատ կարիք ունեցողներին¹⁹ ծախտել նոյն ցորենը այն գնով՝ ինչ նստել էր կոմիտէի վրայ: Որով գիտացները կարողացան գնել ցորենը 5 թուրլի՝ 10 կլոպեկի, մինչդեռ դորսը կրտը ծախտում է 9 թուրլի և այն էլ չի գոնուում:

Այսօր փոխադրութիւնը փութացնելու համար, տեղական ժողովրդից ձեռնարկեցինք կազմել 150 սայերի մի ապօք [գումակ, սայլաշարք], որը Սարիլամիշից պիտի փոխադրել ալիր Խնուս՝ փութը 4 թուրլի՝ հաշուվ: Այսիրները իրենց ժամանակին չը հասնելով Սարիլամիշ, ստիպեցինք բողնել սայլերը Սահիգ-Գորստովի [Թաղաքների միության] 1500 փութ ալիրները և որիշ իրեր փոխադրելու: Մեզի համար միայն փոխադրուեց 100 փութ ալիր: Մեր Խնուսի սեփական ապօռով փոխադրուեց շաբար և որբանոցի վերաբերեալ պաշարե-

նեա:

Որպէսզի վիրութեամբ կատարուի փոխադրութիւնը Սարիլամիշից մինչև Խնուս, որոշեցինք ունենալ մի կայան Եաղանում, Բասենի սայլերը Սարիլամիշից փոխադրելով մինչև Եաղան, իսկ Խնուսի սայլերը Եաղանից տանեն Խնուս:

II. Մի օրեայ վիճակագրութիւն.- Որպէսզի շրջանի ամբողջ ազգաբնակչութեան թիր մեզի յայտնի լինի և որպէսզի մենք կարող լինենք պետական նպաստ ստանալ, տեղական ժողովրդից որոշեցինք կատարել միօրեայ վիճակագրութիւն, որու արդիւմքը հետևնալու է:

ա) Խնուսի շրջանում 3343 [հոգի]

բ) Կոմմունի շրջանում 600 [հոգի]

գ) Սուլշի շրջանից և նոր ազատուողներ 1000 [հոգի]

[Ընդամենը]

4943 [հոգի]

Ինձի հետ բերելով վիճակագրութեան թղթերը, եզրակացութիւնը ներկայացնեց գեներալ Թամաչէսիմ²⁰, որը կարգադրեց անմիջապէս 2000 թուրլի փոխադրել IV կորպուսին [իրամանատարությանը] տեղի ազգային կազմակերպութեան միջոցաւ բաժնելու հասարակութեան:

III. Որբանոց.- Նոր եկող որբերի փոխադրելը գտնելով անյարձար, որոշեցինք տեղում պահել և ստացանք վարչութիւնեղ կարգադրութիւն՝ մնայուն որբանոց ունենալու, որը հետզետէ կանոնաւոր վիճակ պիտի ստանայ:

IV. Գերիների ազատման գործը.- Իմ տրամադրութեան տակ դրուած էր 2500 թուրլի գերիների ազատման Թիֆլիսի յանձնաժողովի կողմից, Անդրանիկի ձեռողվլ²¹, գործադրելու համար գերիներ ազատելու: Թիֆլիսում, սեաստեմբերի վերջերին, 60 սաստեմցիներ և դաշտեցիների ներկայացնութերը խնդիրը ներկայացրին, որպէս զի իրանց դիրքութիւն տրիք երկիր մտնելու և աշխատելու գերիների ազատման: Իմ տրամադրութեան տակ փող դնող մարմինը համաձայնեց միայն 10 հոգիի երկու ամսուայ

19 Արված է մակագրություն. «Ժողովուրդը սովից ազատելու համար»:

20 Թամանշև Վասիլի Միխայլովիչ (Թամանշան Բարսեղ, 1859-1932) - ռուսական բանակի գեներալ: Կովկասի փոխարքային կից Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղապորձան վարչության գլխավոր լիազոր:

21 Անդրանիկ Օզանան (1865-1927)- հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, Դայկական և կամավորական խմբի հրամանատար (1914-1916): 1917թ. փետրվարից հեկավարել է արևմտահայ փախստականների օգնության և տեղավորման աշխատանքները:

ապրուսի վորդ վճարել 600 թուրի]: Հակառակ այդ կտրուկ պատասխանին, այժմ այստեղ կան մոտ 100 հոգի, որոնք զիտեն Մօտկանի, Սասունի, Հազորի, Ֆարղինի բոլոր ճանապարհները և լեռնանցքները, շահագրգուած են գերիների ազատման գործով, որովհետև ունին ազգականներ և սիրելիներ, որոնք կարող են ազատել: Իմ առաջին գործը եղաւ դասաւորել այդ ուժերը: Այժմ այնտեղ կան 25 հոգինոց ծիասորների մի խումբ, բացի այդ 10 հոգիից կան նաև 60 ուրիշ երիտասարդներ, որոնց նշանակուած են դեկավարներ: Այդ բոլորը գործում են մեր Մշոյ ասորիակն [ջոկասի] կից, ամէն աջակցուին ցոյց տալով: Դրանց պարտականութիւնն է.

ա) Ամեն առաւոտ երեք գծերի վրայ, ուսկից [որտեղից] հաւանաբար զայս են նոր ազատուղները, և սպասում են մինչև ուշ գիշեր:

բ) Նոր եկողներին անմիջապէս առաջնորդել դէպի գլուրը, ուր գտնուում է մեր սննդաւու կայանը:

գ) Լրտեսել [իետախտուգել] լեռնամասը և երբ դիմութիւն գտնի, լուր հասցնել մօտերքը գտնուող հայերին, նրանց ազատելու իրենց սեփական միջոցներով:

Այդ խճերի աշխատանքի շնորհի ազատուում են նոր եկողները զանազան վորութիւնների ենթարկուելոց:

Թէ մեր դրկած մարդկանց բերած տեղեկութիւններից և թէ նոր ազատուղներու պատմածից պարզուում է, որ ճշտապէս կան հայեր հետևեալ վայրերում.

ա) Մօտկանի և Խարզանի շրջանում կան ոչ նուազ քան 5000 հայեր:

բ) Խոլզի, Ֆարղինի, Հազորի և Սիրկանի դաշտում կան մօտ 8000 հայեր, բացառապէս երիտասարդներ:

գ) Սիրկանի և Հոտնովի մէջ կան 150 զինաւու մասին մասին և ապահովութիւն մէջ:

Ներկայ տարիայ մայիսին և յունիսին Մօտկանի շրջանից մեր հետ յարաբերութիւն ունեցող Մահմէտ աղան ներկայ սեպտեմբերին փորձում է գալ Մուշ և յաջողուում է հանդիպել մերոն և այդպէս դարձեալ սկսուում է բիրտերի միջոցաւ գերիների խումբ խումբ զայր: Լուր է տարածուում բիրտերի մէջ, լսում են վերոյիշեալ վայրերում գտնուած հայեր ևս, ու այսպիսով սկսուում է հոսանքը երիտասարդ խճերի, որոնք զայս են ինքնաբերաբար և Սասուն լեռնամասում դիմաւորուում են մեր տրամադրութեան տակ գտնուած 15-20 երիտասարդ-

ներու կողմէ, որոնք պահում են նոր ազատուղներին մինչև ապահով տեղ հասնելը:

Սինչե նոյեմբերի 10-ը մէկուկէս ամսուայ ընթացքին ազատուած են 380 շունչ, որոնցից 120-ը միայն քրտերի ձեռքով, իսկ մնացած 260-ը ինքնաբերաբար: Իմ մեկնելի յետոյ 5 օրուայ ընթացքին եկել են 250 շունչ, որով ընդամենը 630 շունչ:

Մեր մօտ եկող քրտերը ներկայացնում են բանական պահանց: Առաջուց խոստացուած է նրանց ամէն մի հայու համար տալ մէկ ոսկի: Մեր տրամադրութեան տակ չլինելով մեծ գումար, չինք կարող ընդառաջ գնալ նրանց պահանցներին: Առաջին երկու խմբերը բերող քրտերին տրուած է երկու անգամով 16 օսմ[անյան] ոսկի, Սահիպ Գորոստովի [Քաղաքների միուրյան] այնտեղի ներկայացուցիչի կողմից որպէս ժողովրդական նպաստ և մենք զինը [չենք] խառնած այդ հաշիմն:

Մենք միջիան ծախսել ենք 506 թուրիի այս 10-15 տղաների ճանապարհածախսի և ապրուսի համար մինչև նոյ[ներերի] 10-ը:

Երկու շրջանի բիրտերը ոսկէ դրամի պահանց են ներկայացրել, մէկը Մօտկանի, միաւ՝ Խոլզի կողմէ: Անհրաժեշտ է տրամադրել 200 օսմ[անյան] ոսկի, փոխադրելով իրաքանչչիր շրջան 100 օսմ[անյան] ոսկի, այսպիսով մի յոյս կունենանք ազատելու բազմաթիւ խճերի: Նկատի ունենալով մեծու ժամանակը և ծինսաւագատ լեռները, որկէ անցնելիս շատերը ցրտամսի կը լինեն, քիրտ աղաները խօսք են տալիս այդ փորով պահելու մինչև զարուն իրենց մօտ գտնուած հայերին, ինչ որ շատ նպատակայարմար է:

Գերիների մասին տուած տեղեկութիւններս վերջացնելի առաջ, ուզում են արձանագրել, որ վերը յիշուած 150 զինաւու ապստամբները, որոնք գտնուում են Մուշից 80 վերստ հետարկութեան վրայ՝ չգիտէին հայերի գոյութիւնը Մուշում, և հաշտուած լինելով իրենց պայմաններին, դիմել են խիստ և ոխրոս միջոցների բիրտերի և բիրդերի դէմ իրենց գոյութիւնը պահպանելու համար: Դրանց գոյութիւնը մի տեսակ դիմութիւն է տալիս այդ լեռնանցքով անցնող փախստականներին:

Վ. Մշոյ Սննդառու կայանը.- Հոկտեմբեր 20-ից սկսած Մուշում մեր ներկայացուցիչների կողմից ընդունում են նոր ազատուու զարթականները: Նրանք մնում են երկու օր այնտեղ, ստանալով թէյ, շաքար, հաց և մեր յատուկ առաջնորդների միջոցաւ բերում են Խոնու, որոնք տեղատրուում են շրջանի գիտերում:

Ինչպէս վերը յայտնեցի, մենք արտօնութիւն շտմէինք մննատու կայան իմնելու, ուստի ստիպուեցի հեռագրել վարչութեան՝ արտօնելու մի մննատու կայանի հիմնումը: Միևնոյն ատէն հրահանգեցի Սուշի ներկայացուցին շարունակել տալ անմիջական սնունդ: Ստանալով վարչութիւնն կարգադրութիւն սննատու կայանի հիմնման մասին, անմիջապէս Խնուսից փոխադրել տուի ալիք, շաքար և որիշ ուտեստեղէններ բունցը խնդակայանը] աւելի լաւ իր նպատակին ծառայեցնելու համար:

VI. Գ-պրոցեսը.- Հիմքը դրած ենք իրեք դպրոցների՝ մէկը Խնուսում, միաս երկուոք շրջանի գիտերում, իրաքանչիւրը 50-ական աշակերտով: Ուսուցութեան համար հրավիրուած են տեղական ուսուցիչներ:

VII. Սերմնացու.- Խնուսի շրջանում ցանքեր չեն եղած սերմնացուի չգրութեան պատճառով: Գտնուած իին ցորենները չեն բուսներ, շրջականերու ցորեն գտնելու յոյս բոլորովին չկայ: Քանդուած գիտացիութեան տնտեսութիւնը վերականգնելու միակ միջոցը՝ նրանց սերմնացու հասցեն է: Եթէ այս գարնան հնարաւորութիւն չը լինի ցանքերը կազմակերպելու՝ կատեղուի տնտեսական այնպիսի քայլայում, որ միայն երեք-չորս տարի յետոյ կը վերականգնուի, մինչդեռ, եթէ 5000 բնակչութեան, նազարոյն հաշուով 5000 փուր սերմնացու ցորեն տանք, եկող տարսայ օգոստոսից սկսած 8 ամիս ապահոված կը լինենք ամքող ազգարնակութեանը: Սերմնացու կարելի է վերցնել Ալէքսանդրապոլի, Երևանի և Կարսի նահանգներից: Դէտը է աշխատանքները այժմէն իսկ առաջ տանել, որպէս զի գարնան ցանքի ժամանակ ամէն բան պատրաստ իին:

Առաջարկներ.- Նկատի ունենալով, որ շատերը այն հարցերից, որոնք ինձ ստիպեցին անցնել արդէն որոշուած և գործադրութեան մէջ են, ինչպէս.

ա) Որբանոցի գոյութիւնը:

բ) Դպրոցների հաստատումը:

գ) Պետական նպաստի կարգադրութիւնը:

դ) Մուշում Սննդատու կայանի հիմնումը:

Վերոյիշեալ հաստատութիւնների պահ-

պանձան համար խնդրու եմ մշտապէս անել այս կարգադրութիւնները, օքը օրին, որոնք անհրաժեշտ են գործ շարունակելու համար:

Ծանրանում եմ հետևեալ առաջարկների վրայ, յոյս ունենալով, որ ժամանակին կը կայացներ Ձեր որոշումը:

ա) Սերմազու հասցեն Խնուս 5000 փուր, որուն զննան և փոխադրուեան համար նախատեսում եմ 60000 թ[որլի]:

բ) Ամէն միջոց չի խնայել Խնուսի պահեստին հասցենը մինչև յունարի 15-ը 8000 փ[որլի]²²:

գ) Մշտապէս հետամուտ լինել ամէն ամիս ստանալու որոշուած պետական նպաստը:

դ) Հայաստանի Ընդհանուր Նահանգապետի²³ հետ ունենալ որոշ յարաբերութիւն դիմացնելու համար մեր գործունութեան շրջանում զանազան քաղաքացիական յարաբերութիւններ:

ե) Որբանոցի և Սննդատու կայանի համար անհրաժեշտ ուտեստեղէնները փոխադրել տալ Սարիղամիշ, ուսկից մենք հնարաւորութիւն կունենանք ստանալու:

զ) Ընդունել այս յակերուած նախահաշիւր, որը կցում եմ իմ ներկայ գեկուցումին:

Յաւելուած.- Խնուսի շրջանում մնացած մեր ներկայացուցիչ պրմ. Դարմանեանի բով (Գամարեանի օրով) գտնուած վեց ամսուայ հաշիները առել և փակել են: Ինչպէս նաև հետո եմ բերել մեր ատրիադների (ջոկատների) սեպտեմբերի և հոկտեմբերի բոլոր փակուած հաշիները:

Խնուսի և Սուշի Հայկական Կեդրինական Կօմիտէի լիազօր Կարօ Սասունի ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 37-45:

Բնագիր: Ձեռագիր:

22 Արված է մակագրություն. «Այս բոլորը ընդունած է և կատարած»:

23 Նկատի ունի Թուրքիայից նվաճված երկրանասերի գեներալ Զահանգապետ, գեներալ նայոր Ն. Ն. Պեշկովին (1857-7): Գեներալը մասնակցել է 1977-1878թ. ռուս-թուրքական պատերազմին՝ Բայկամյան ռազմաճակատում: 1883թ. Եղել է Ռիզե քաղաքի ռուսական փոխ-հյուպատոս, իսկ 1886-1889 թթ. Կ. Պոլսում ռուսական ռազմական գործակալ (զինվորական կցողոր): 1906-1908թթ. Եղել է Խարկովի նահանգապետ: 1912-1913թք. «Ուսւ ժողովորի միություն» ծայրահեղ միապետական կազմակերպության (նրա անդամներից եր Նիկոլայ Առաքելյանը) նախագահ: Ապա զրուցվել և 1913-1914թք. գլխավորել է Հյուսիսային բևեռ արշավախմբեր կազմակերպող հանձնաժողովը: 1916թ. հուլիսից Զշանակվել է Թուրքիայից նվաճված տարածքների, այդ թվում Արևմտյան Յայաստանի գեներալ-նահանգապետ: Նրա նշանակումը համընկել է ռուսական իշխանությունների հակահայ քաղաքականության ուժեղացմանը:

N 4

Հայկական] Կենդրոնական]
Կօմիտէի վարչութեան

1 դեկտեմբերի 1916թ.
 Թիֆլիս

Սեպտեմբերին, վարչութեանդ ներկայացրած և ընդունած նախահաշիս մէջ մոռացել եմ նշանակել մի քանի անհրաժեշտ ծախսեր, որոնք ներկայացնում եմ և խնդրում եմ կայսեր Ձեր որոշումը.

ա) Խնդրուի և Մուշի գործիշներին յատկացած կօմիտէի ձիերի ապրուսոր՝ 6 ծի, ամիսը 60-ական ո[ուրիշ] – 360 [ոուրիշ]:

| | |
|--|--------------|
| Գումար | 360 թ.,- |
| բ) Երկու վայրերում անհրաժեշտ է ունենալ. | |
| 3 ծառաներ (զինօր) | |
| 3 ծառաների ոռժիկ՝ 30-ական [ոուրիշ] | 90 թ.,- |
| 3 թ.,- ապրուսոր [իսամար] | 30 թ.,- |
| | 90 թ.,- |
| Գումար | 180 [ոուրիշ] |
| գ) Նկատի ունենալով, որ որպէս ներկայացնիշի, յարաբերութեան և հանդիպումների ընթացքին լինում են ծախսեր, որոնցմէ չի կարելի խուսափել, ամիսը յատկացնել 200 ո[ուրիշ] | |
| Որով ընդհանուր գումարը լինում է. | |
| | 740 ո[ուրիշ] |

Նախկին նախահաշուվ ինձի յատկացած է ամիսը 1300 ո[ուրիշ]: Խնդրում եմ դրա վրայ աւելացնել 740 ո[ուրիշ] և, որով ամիսը իմ աստրեադներին [չոկատներին] տրուած մը կը լինի 2040 ո[ուրիշ]:

դ) Անցնող գաղթականների համար վարչութիւնը երեւ յարմար է գտնում, թող իմ տրանսպորտեան տակ դնէ որոշ գումար՝ յատկացնելու նրանց որպէս ճանապարհածախս:

Սնամ յարգանօք՝ Խնդրուի և Մուշի շրջանի Հայկական] Կօմիտէի] լիազօր ԿարօՍասունի [ստորագրություն]

ՀԱՍ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 46: Բնագիր: Զեռագիր:

24 Արված է ուղղում «2400 ո[ուրիշ]:

25 Արված է ուղղում «1000 ո[ուրիշ]:

26 Արված է ուղղում հունվար ամիսը ջնջված է և ավելացված «20-ական բուրլի»:

27 Արված է ուղղում «8500 ո[ուրիշ]»:

28 Փաստաթորի թվազո՞ւմ համար հիմք ենք ընդունել ԿՅՇԾ-Ծ մտից նշումը:

N 5

27 յունվարի 1917թ.
 Խնդրու

Սեծայարգ պ. Նախագահ
 Նախագահի Հայկական] Կենդրոնական

Կօմիտէի Վարչութեան

Խնդրում եմ կարգադրութիւն անեք բաց թողնելու խնուս-Մուշի շրջանին հետևեալ գումարները ըստ որոշման.

1. Սեպտեմբեր], հոկտեմբեր] նոյեմբեր] և դեկտեմբեր] ամիսների բացը գոցելու համար

1435 [ոուրիշ] 73[կոպեկ]

2. Ասրիանի [չոկատի] յունվար], փետրվար] ամսաւայշները 2600 [ոուրիշ]

3. -,- ձիերի, ծառաների և ներկայացուցչական ծախսեր յունվար], փետրվար ամիսների]

1000 [ոուրիշ]

4. Շրջանից անցնող և դարձող գաղթականների] մանաւարիածախս յունվար], փետրվար ամիսների]

500 [ոուրիշ]

5. Սշոր Սննդառու կայանին յատկացված], ամիսը՝ 1200 [ոուրիշ] դեկտեմբեր], յունվար]

Փետրվարին հատկացվել է] 3600 [ոուրիշ]²⁴

6. Խնդրու որբանոց՝ 50 որբերին հատկացվել է] յունվար, փետրվար՝ 2000 [ոուրիշ]²⁵

7. Հարամիկի որբանոց՝ 50 որբ [հատկացվել է] յունվար, փետրվար՝ 1000 [ոուրիշ]²⁶

Ընդիւմուր] գումար

12135 [ոուրիշ] 73[կոպեկ]²⁷

Հայկական] Կենդրոնական] Կօմիտէի Խնդրու-Մուշի լիազօր Կ Սասունի [ստորագրություն]

ՀԱՍ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 17: Բնագիր: Զեռագիր:

N 6

Հայոց Կեդրոնական] Կօմիտէի Վարչութեան
 27 փետրարի 1917թ.²⁸

Խնդրու

Տալով շրջանիս վերաբերեալ նոյեմբերի և դեկտեմբերի հաշիները, ուզում եմ պատվարժան] վարչութեան զեկուցանել շրջանիս գործուներեան մասին հանսուալի:

ա. **Մշոյ Սննդառու կայանը.**- Մի առաջարկ շրջան, ինչպէս նաև Մուշի և ներկայացնում այժմ, ոչ մի ընկերութիւն չի գործէ բացի

Հայկական Կեդրոնական Կօմիտէն: Որոշած լինելով այնուել ունենալ Սննդասուր կայան 1200 րուբի ամսական ծախքերով, նոր ազատողաների համար մի բարիք էր: Նոյեմբերի և դեկտեմբերի տարլօները [հաշվները] դրկում եմ Զեզ, որմէ պարզ երեսում է, որ այդ երկու ամսայ մեջ սնունդ են ստացել 2000 անձ: Իսկ երկու ամսայ ընթացքին եղել է միայն 1801 թ[որբի] 76 կ[ոպէկ] սնունդի համար, իսկ կահարորդեան յատկացւած է 800 թ[որբի], որը դեռ շարունակում է ծախսել: Խնդրում եմ շուտափոյք դրկել դեկտեմբերի, յունվարի և փետր[վարի] ամսավճարները՝ 3600 թ[որբի]: Այս օրերին մեծ պատրաստորին պէտք է տեսնել, որով գաղթականորին կը շատանայ, խնդրեմ նկատի ունեցող բիտչէն ընդարձակելու:

բ. Որբանոցը.- Նոյեմբերի սկզբներում Կոմիտէն որոշեց մնայուն որբանց ունենալ Խնդրում, առ այդ ինձի յատկացրեց նոյեմբերի և դեկտեմբերի համար 2100 րուբի, իսկ որբանցի կահարորդեան միանագ՝ 1800 թ[որբի]: Խնձակս հաշիւներից պիտի տեսնեք, նոյեմբերին և դեկտեմբերին մենք շատ չնշին ծախը ենք արել սնունդի համար, որովհետև հաւաքած որբերը բաւական երկար ժամանակ սնունդ են ստացել Սշոյ մեր պունկտում, իսկ Խնդրում թէ մեր պունկտից և թէ Քաղաքների Սիրուեան պունկտից սնունդ ստանալով մեր վրայ ծախը չեն նստած:

Որբանոցը կանոնաւրած է յունվարի սկզբից: Այժմ մենք Խնդրում ունենք մի որբանց 50 որբերով, որոնք կանոնաւր հազնած են, ունեն իրենց առանձին մահճականներ (որ տեղում չինել տիֆք 4-րդ կօրպուսի շինարարական ժմույն) և զատ զատ բոլոր իրեր: Ըենքը վերանորոգել ենք և ներկայացնում է շատ մեծ յարմարութիւններ, մաքրութեան և կանոնաւրորդեան տեսակետից, եթէ ոչ գերազանցել գրնէ կը նրգի Կովկասի բոլոր որբանոցների հետ: Ունի ընդարձակ պարտեզներ, որոնք մտադիր են մշակել տալ այս գարնան, ուստի խնդրում են մեր տրամադրութեան տակ բողնել նոյեմբերի] և դեկտեմբերի խնայած գումարը, որպէս զի երկրագործական և արհեստի աշխատանքներին յատկացնինք: Ես յոյս ունիմ, որ արդինքով իսկ կարելի է ապահովել որբանցի կէս տարսայ սնունդը: Խնդրում եմ յայտնեք Զեր կարծիքը այդ մասին: Թիֆլիսի որոշման համաձայն, մենք պիտի ունենայինք 100 որբերից կազմած մի որբանց, բայց նկատի ունենալով,

որ այստեղ այդպիսի ընդարձակ շէնք չի կարելի գտնել և որբերի թիր շատ է, սակայն եցին մօտիկ (10 վերստ հեռու) գիտում՝ Հարամիկ, իմանել երկրորդ որբանոցը 50 որբերով: 48 երեխայ՝ որբեր ցուցակագրած են, մօտերս կը վերջանայ սարքը [շինարարությունը] և այնտեղ էլ կը սկսի որբանոցը կանոնաւր գործել: Այս բաժանումով ծախքը շատանում է, բայց դա անհրաժեշտորին է: Տեղում գնել եմ բուրդ և վերմակների մեծ մասը դրանից պիտի պատրաստեմ, խնդրում եմ կարգադրել որկել ամաններ 50 որբի և 100 երեխայի շուտեր, 50 երեխայի արտաքին գգեստ, մեծ մասը մանչու:

Խնդրում որբանոցի համար, յունվարի և փետրվարի ամսավճարները խնդրեմ միանագ որկեր և իրարանշիր երեխային 20-ական թորբի, որով երկու ամիսը կանէ 2000 թ[որբի]: Նկատի պէտք է ունենալ, որ մեր որբանոցդպրոցը բարյական մեծ տպաւորութիւն է բողել թէ ժողովրդի վրայ և թէ կառավարական շրջանակներում: Իսկ Հարամիկի որբերի համար փետրվարի ամսավճարը՝ 1000 թ[որբի]:

Խնդրում որբանոցն ունի իր առանձին կառավարչուիկն՝ օր. Սեծատուրեան, որ մինսնյն ժամանակ ստանձնել է դպրոցական մի քանի պարտականութիւններ էլ: Հարամիկի համար անհրաժեշտ պիտի լինի կառավարչուիկ, բայց գարնան միայն:

զ. Պարողներ.- Սինչև իմ Խնդրում վերադառնալը, մեր ներկայացուցիչները որոշած գիլերում, ցուցակագրելով երեխաներին (ցուցակները որկած է կօմիտէիդ) յայտնում են, որ դպրոցները բացւած է: Շրջանի երեխաների մի մասը հաւաքած է մի կերպով գիլում, բայց շտմենարով սնաներով [սանկլոլ] պայմաններ, ստիպում է վերադառնալ իր տունը: Նկատի առնենով այդ անելանելի դրութիւնը, մենք ստիպած, եկանք հետևեալ եզրակացութեան՝ ունենալ միայն այն տեղեր դպրոց, որ կան որբանոցներ, այդպիսով այժմ մենք ունինք երկու դպրոցներ՝ մէկ Խնդրում որբանոցին կից, որ յաճախում են որբերով միասին 50 որը և 28 երեկեայ = 78 աշակերտ: Ցուցակները դրկում են [Ցուցակները բացակայում են]: Եւ երկրորդ՝ [դպրոց և գործում] Հարամիկում, առաջմ 48 աշակերտ:

Ունենք երկու ուսուցիչ՝ մէկը Խնդրում, միաւր Հարամիկում:

Պարոցական գործը դժւարանում է մանաւանք դպրոցական յարմարութիւններ ստեղծելու տեսակետից: Հաշիւները կը որկին յուն-

ւարի հաշիների հետ: Քաղաքների Միությունը խօսք է տեղ կերակրել ցերեկայ աշակերտներին: Խնդրեմ արտօնեք աշակերտ երեխաներին միատեսակ հագուստ ունենալու և այդ առիջ անեք որոշ կարգադրութիւն:

դ. Պահեստը.- Պահեստի մասին մանրամասն գրել եմ պարենաւորման ճիշդի վարչութեան, խնդրեմ կարգադրութիւն անեք շուտով այս տեղ ալիքը դրկելու՝ այլապէս ժողովուրդը սովամահ կրիմի: Պահեստում բաւականաշավի շաքար և բբինձ կայ: Սեծ կարիք ենք զգում նարի, ալիքի և սապօնի:

ե. Հագուստեղին.- Գեներալ Թամամշեանի դրկած տաք շորերից միայն 28 սննդով ստացել ենք և բաժանել հասարակութեան, որը մեծ կարիք ունի: Սարսափելի աղքատութիւն է տիրում ամիրաժշշուն է 1500 երեխայի, 2000 կանացի և 1500 տղամարդու թէ ներքին և թէ արտաքին շորեր: Յայտնեցէք Ձեր կարգադրութիւնը:

գ. Նպաստի խնդիրը.- Գեներալ Թամամշանի 20000 բուրյին չստացեց: Նպաստի խնդիրը ինպէ՞ս կարգադրեց, մեզի անձանօք է, խնդրում եմ տեղեկացնեք մեզի, ազատելով մեզ անօրոշութիւնից:

է. Սերմացու.- Նոյեմբերի իմ առաջարկի հիման վրայ Կօմիտէտ խօսք տուց յատկացնելու Խնուսի շրջանին 5000 փոր ցորեն: Գարունը մօտենում է՝ շրջանի բնակչութիւնը անհանդեր ցանքերին է սպասում, եթէ այս գարնան հնարաւորութիւն չստեղծենք ցանքերի՝ այս ժողովովին պահելը անհնար կը լսանայ:

ը. Հաշտական.- Հոկտեմբ[թեր], նոյեմ[թեր] և դեկտեմբեր ամիսներին ստացել եմ Կօմիտէտ 4900 ր[ուբլի]: Մինչդու ստիպած եմ եղել մաքրել սեպտեմբերի արկախ հաշիները, Կօմիտէտի կարգադրութեամբ, որով հոկտեմբերի հաշինեկով բաց է մասս 959 ր[ուբլի] 10 կ[ոսկեկ], որը ծախսած է սեպտեմբերի հաշին և չստացած Կօմիտէտ: Ենտոյ եղել են այնպիսի բացառիկ ծախրեր, որոնք չեն նախատեսած ինձի յատկացու գումարների մէջ, օրինակ՝ 1) տաք շորերի փոխադրութիւնը, 2) տեղի բունգտի կենտրոնի կամ պահեստի իրերի փոխադրութիւնները, կամ գրասենեակի կահառոքը և լուսաւորութիւնը ու վառելիքը. 3) գործիների ճանապարհածախքերը, որոնք ամեն ամսաւա ծախրերի վրայ մի բիւգ [պլյուս] են կազմում: Որով կ'ունենանք.

1) Սեպտեմբերին աւելի ծախսած

- 997 [ռուբլի]- 85 [կոպեկ]
2) Հոկտեմբերի բացառիկ ծախրեր
428 [ռուբլի]-80 [կոպեկ]
3) Նոյեմբ[թը] (N 1-3-4-5-6-9-10-15) բացառիկ
236 [ռուբլի]-10 [կոպեկ]
4) Դեկտ[եմբեր] (N 2-5-6-7-9-14-15-18-19-20)
488 [ռուբլի]- 98 [կոպեկ]

2151 թ[ուբլի] 73 [կոպեկ]

Դուտախի բունգի հաշիներից աւելի փոխ յանձնած է ինձ և մտել է մուտքին մէջ

716 թ[ուբլի],

որով աւելի ծախսած կը լինի

1435 թ[ուբլի] 75 [կոպեկ],

որոնք անհրաժեշտ, բացառիկ ծախրեր են:

Այս հաշիների ընթացքին նկատի պիտի ունենալ, որ եղած ծախրերով գրեթե երկու ամսայ պաշար ունին Կօմիտէտի թէ հեծներից և թէ ապօքի ձիերը, որով յաջորդ ամիսներին ծախրերը կը պակասին:

Խնդրում եմ բարի լինեք բաց մնացած 1435 թ[ուբլի] կ[ոսկեկ] դրկել յաջորդ ամսավճարների հետ:

Պաշտօնեաների և ծառաների ոռնիկները թողել եմ Կօմիտէտի վրայ, եթէ յարմար էք գտնում, կարելի է անցկացնել մէկ-երկուորը Սննդասու կայանի հաշին, մէկ-երկուորը՝ որբերի հաշին, որպէս որբեր հասարոի, որ յակապէս էլ այդ պարտականութիւններն են կատարում:

Վերջացնելով վերի համառօս տեղեկութիւնները, խնդրում եմ ընդունել երկամսայ բոլոր հաշինները, անել շուտափոյք կարգադրութիւններ շրջանիս անհրաժշտ խնդիրների առիջ՝ փոխադրել իմ հասցէս շրջանիս յատկացած որոշ գումարները գործերը կանոնադր վարելու համար:

Զեկուցումին միացնում եմ տրմանտը, փողերը բաց բողնելու համար:

Սպասելով Ձեր կարգադրութիւններին, մնամ յարգանօք՝ Հայ[ոց] Կենդ[րունական] Կօմիտէտի Խնուս-Մուշի շրջանի լիազօր՝ Կ[արո] Սասունի [սոտրագություն] շտամպ. Արմանակ Պատրիարքական Կոմիտէտ. Վход. N 126. Պոստուլո 2/II-1917ր.

ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 14-16:

Ձեռագիր: Բնագիր:

N 27

N 7

2 մարտի 1917թ.
[Վայրը նշված չէ]

**Մեծայարդ պ. Ս. Յարուբինեանց
Նախագահի Հայկական Կենտրոնական
Կոմիտեի Վարչութեան**

Անցած շաբթօն գրել եմ Կոմիտեի շրջանիս անհրաժեշտ գործերի մասին: Խնդրում եմ յայտնեք Ձեր կարգադրութիւնը: Ցունվ[վար] և փետր[վար] ամիսների համար յատկացած 8500 թ[ուբ]-ին ստացել եմ: Մշյո Սննդասոու կայանի և Խնուսի երկու որբանոցների համար անհրաժեշտ է ստանալ ամեն ամիս 400 գոտի ալիր, որի առջին խնդրում եմ անմիջական կարգադրութիւն անեք, որ Սարիղամիշից անմիջապէս փոխադրի մեր հասցեին, այլապէս անել դրութեան կը մատնիմք:

Խնդրում եմ հեռազրով կարգադրութիւնն անեք պ. Սիսիքար Դարձանեանցին. որպէս զի անմիջապէս վերադառնայ Թիֆլս և իր հետ փոխադրէ որբանոցներին անհրաժեշտ հետևեալ իրերը.

ա) Ներքնակի սաւանի համար 270 արշին ամերիկեան բարակ, լայն կտոր և բարձերի

համար 100 արշին

բ) 50 որբի համար 50 գլխարկ կամ գլխարկացու

շ) 100 որբի -,- 100 արտաքին զգնաստ

դ) 100 հատ լաւ չուստեր

ե) 200 զոյգ երկար փողերով գուլպայ

զ) 100 հատ գոտի

է) 50 վերմակի երես

ը) 3 հատ արդուկ

թ) 2 մազեր կտրելու մեքենայ և 50 երեխայի ճերմակեղեն, 50 երեխայի գոգնոցի կտոր (այսուեղ կարել կտանք):

Երեւ պ. Դարձանեանցի հետ կարելի չէ որկել այդ իրերը, խնդրում ենք որկել Սարիղամիշից, որպէս փորգոններով կարող ենք ստանալ:

Այս տեղի պահեստից, Կոմիտեի հաշվին ստացայ մարտ ամսայ համար 2000 թ[ուբի] և հեռազրեցի Ձեզի, որպէսզի վճարուի նոյն ճիշդի վարչութեան: Բոլոր հաշիները պատրաստ են, կը որկեն, երբ վստահելի անձնաւորութիւն գտնի:

Յարգանօք՝ Հ[այկական] Կ[ենտրոնական] Կոմիտեի Խնուս-Մուշի շրջանի լիազօր՝ Կ. Սասունի [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 453, թ. 13 և շրջ.:

Բնագիր: Ձեռագիր: